ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/48

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի տնօրեն՝

Դ. Իսրայելյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական, N 03Ա070604)

Ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 03.07.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 03.07.2019թ.)

Վ. Գրիգորյանի (լիազորագիր, տրված՝ 04.07.2019թ.)

Ա. Մամիկոնյանի (լիազորագիր, տրված՝ 04.07.2019թ.)

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝

Ա. Կոթողյանի (լիազորագիր, տրված՝ 08.07.2019թ.)

Ա. Չերքեզյանի (լիազորագիր, տրված՝ 08.07.2019թ.)

Ռ. Կարապետյանի (լիազորագիր, տրված՝ 17.07.2019թ.)

Վ. Մաշկովսկայայի (լիազորագիր, տրված՝ 17.07.2019թ.)

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Դ. Գրիգորյանի

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ՝ Լ. Սարգսյանի

«Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչ՝ Խ. Հարությունյանի

քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից 02.07.2019թ. ներկայացված (03.07.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/48 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 02.07.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից վերջինիս կարիքների համար տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների պատրաստման աշխատանքների կատարման ձեռք բերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ ընկերությունների, 20.06.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի երկու մասնակից՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի և «Զնակ Ստանդարտ» ՍՊԸ-ի գնային առաջարկները համապատասխանաբար կազմում են՝ 341 640 000 ՀՀ դրամ և 358 020 000 ՀՀ դրամ (տարբերությունը մոտ 17 մլն):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրական շահառուները (հիմնադիրները) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձինք, Ընկերության կողմից Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվել են հիմնադիր իրավաբանական անձանց անվանումները՝ ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG և ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ ՍՊԸ-ն (նշվել է նաև վերջինիս պետական ռեգիստրի վկայականի համարը):

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 21.06.2019թ.:

ՀՀ ոստիկանությունը դեռևս 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, եթե գնման գործընթացի մասնակից կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է ոչ թե ֆիզիկական, այլ

իրավաբանական անձ և ոչ բաժնետիրական ընկերություն, արդյոք մասնակիցը պարտավոր է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները որպես իրական շահառու բավարարում են ընթացակարգը շարունակելու համար:

Ի պատասխան ՀՀ ոստիկանության 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ գրությամբ ներկայացված խնդիրը կարգավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 /մասնակցի իրական շահառուների մասին տվյալները/, որը ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ, այն է՝ Հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել 21.06.2019թ. նիստը և առաջարկել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա շտկել անհամապատասխանությունները:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին 21.06.2019թ. ուղարկված ծանուցման (կցվում է) համաձայն (նույնաբովանդակ է արձանագրության հետ)՝ ««Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 /մասնակցի իրական շահառուների մասին տվյալները/, որը ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը

հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ, այն է՝ Հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատի¬րական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը /մինչև 24.06.2019թ. ավարտը/ և առաջարկել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ 24.06.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է Հավելված 2.1 երկու տարբերակ՝ առաջին տարբերում նշված է մասնակից ընկերության՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, իսկ երկրորդ տարբերակում՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հիմնադիր՝ իրական շահառու իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարների տվյալները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը /բացակայում են իրական շահառուները/: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջները, որոշեց մերժել Ընկերության հայտը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատաս-խանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին

էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրական շահառուները (հիմնադիրները) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձինք, Ընկերության կողմից հայտը ներկայացնելու փուլում Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվել են հիմնադիր իրավաբանական անձանց անվանումները՝ ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG և ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ ՍՊԸ-ն (նշվել է նաև վերջինիս պետական ռեգիստրի վկայականի համարը):

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն արձանագրել է հետևյալը՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 /մասնակցի իրական շահառուների մասին տվյալները/, որը ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ, այն է՝ Հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել 21.06.2019թ. նիստը և առաջարկել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա շտկել անհամապատասխանությունները:

Նույնաբովանդակ շտկման ծանուցում է ուղարկվել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին: Նշված ծանուցումից չընկալելով, թե Հավելված 2.1-ում ինչ շտկում պետք է կատարվի և կոնկրետ ինչ տեղեկատվություն պետք է ներկայացվի, Ընկերությունը սահմանված ժամկետում՝ 24.06.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է Հավելված 2.1 երկու տարբերակ՝ առաջին տարբերում նշելով մասնակից ընկերության՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, իսկ երկրորդ տարբերակում՝ «Բիլլ Սթոուն»

ՍՊԸ-ի հիմնադիր՝ իրական շահառու իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարների տվյալները:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն որոշվեց՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը /բացակայում են իրական շահառուները/: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջները, որոշեց մերժել Ընկերության հայտը:

Վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, մասնավորապես.

1. Նախ և առաջ, գնահատող հանձնաժողովի կողմից չեն նկարագրվել Հավելված 2.1-ում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություն-ները, այլ ընդամենը վերացական նշվել է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 /մասնակցի իրական շահառուների մասին տվյալները/ ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ, այն է՝ Հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը /մինչև 24.06.2019թ. ավարտը/ և առաջարկել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա շտկել անհամապատասխանությունները:

Մինչդեռ ակնհայտ է, որ նշվածը լոկ վերացական բնույթ է կրում, որից ընդհանրապես հասկանալի չէ, թե կոնկրետ ինչ անհապատասխանություններ են արձանագրվել և

Ընկերությունը հստակ ինչ տեղեկատվություն պետք է նշի: Փաստորեն, գնահատող հանձնաժողովը այդպես էլ չի պարզաբանել, թե Ընկերության կողմից ներկայացված Հավելված 2.1-ով ներկայացված տեղեկատվությունը և Ընթացակարգի հրավերով և Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ սահմանված պահանջները ինչով չեն համապատասխանել միմյանց՝ այդ «գուշակությունը» թողնելով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին:

Ակնհայտ է, որ այս հարցը հստակ չէ նաև ՀՀ ոստկանության համար: Մասնավորապես, նշված հարցում հստակեցում մտցնելու համար ՀՀ ոստիկանությունը 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, եթե գնման գործընթացի մասնակից կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձ և ոչ բաժնետիրական ընկերություն, արդյոք մասնակիցը պարտավոր է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները որպես իրական շահառու բավարարում են ընթացակարգը շարունակելու համար: Սակայն ի պատասխան ՀՀ ոստիկանության 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը ընդամենը հայտնել է, որ գրությամբ ներկայացված խնդիրը կարգավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ:

Փաստացիորեն նշված գրագրությունը վկայում է, որ հենց ինքը ՀՀ ոստիկանությունը չի պատկերացնում, թե Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի <<թ>> պարբերությամբ համաձայն՝ երբ գնման գործընթացի մասնակից կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձ է, արդյոք մասնակիցը պարտավոր է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները որպես իրական շահառու բավարարում են ընթացակարգը շարունակելու համար: Եվ ինչպես երևում է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրությունից՝ այս հարցի հստակ պատասխանը չի ստացվել, այլ ընդամենը հղում էր կատարվել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությանը:

Հենց նույն բովանդակությամբ և տրամաբանությամբ գնահատող հանձնաժողովի կողմից շտկման պահանջ է ներկայացվել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին՝ չպարզաբանելով, որ եթե մասնակցի իրական շահառուն իրավաբանական անձ է, ապա պետք է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները:

Հենց այս պատճառով զբաղվելով գուշակությամբ՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկված երկու տարբերակի Հավելված 2.1՝ մեկում նշելով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, իսկ երկրորդ տարբերակում՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հիմնադիր՝ իրական շահառու իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարների տվյալները:

Վերոհիշյալի արդյունքում անկիայտորեն խախտվել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները), քանի որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ–ի համար նման բովանդակությամբ ծանուցում ստանալիս՝ անհասկանալի է եղել, թե կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել հրավերի պահանջների նկատմամբ և հստակ ինչ պետք է շտկեր և նշվեր մասնակցի կողմից:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունից ընդհանրապես չպետք է պահանջվեր շտկում կատարել Հավելված 2.1-ում, քանի որ ինչպես արդեն հայտնել ենք, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրական շահառուները (հիմնադիրները) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձինք, Ընկերության կողմից Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվել են հիմնադիր իրավաբանական անձանց անվանումները՝ ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG և ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ ՍՊԸ-ն (նշվել է նաև վերջինիս պետական ռեգիստրի վկայականի համարը): Եվ Ընկերությունը չէր կարող նշել տեղեկատվություն ֆիզիկական անձ համարվող իրական շահառուների մասին, այն պարզ պատճառով, որ դրանք բացակայում են: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 01.12.2017թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2017/74 որոշմամբ արձանագրվել է, որ եթե մասնակցի իրական շահառուն (հիմնադիրը) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձ, ապա Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվում է միայն հիմնադիր իրավաբանական անձի անունը:

Վերոհիշյալի օգտին է խոսում նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության այն հատվածը, որի համաձայն որի մասնակիցը հայտով ներկայացնում է …… այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն իրավացիորեն նշել է այն անձի /անձանց/ ՝ տվյալ դեպքում իրավաբանական անձանց, տվյալները, ովքեր իրավունք ունեն նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում են մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:

Իսկ եթե տեսականորեն ընդունենք, որ այնուամենայնիվ, պահանջվում էր ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն, ապա երկրորդ փուլով, նախ, ներկայացվել են իրական շահառու հանդիսացող իրավաբանական անձանց գործադիր տնօրենների տվյալները, իսկ այնուհետև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների համաձայն՝ քանի որ բացակայել են ֆիզիկական անձ շահառուներ, ուստի ներկայացվել են հայտ ներկայացնող «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները:

Ընկերությունը խնդրել է նկատի ունենալ, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն իրականում ոչ մի նպատակ չի ունեցել թաքցնելու որևէ տեղեկատվություն իր իրական շահառուների մասին, և եթե ՀՀ ոստկանության կողմից հստակ նշվեր, թե ինչ տեղեկատվություն է ակնկալում, որպեսզի Ընկերությունը ներկայացներ, ապա անխոս, նման տեղեկատվությունը կներկայացվեր գնահատող հանձնաժողովին:

Բացի այդ, «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն տարիներ ի վեր, այդ թվում նաև 2018-2019թթ., մասնակցել է ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված բազմաթիվ պետական գնման ընթացակարգերի և ներկայացրել իր իրական շահառուների մասին հենց այսպիսի տեղեկություններ, և մինչ օրս Ընկերությունից երբևիցե չի պահանջվել ներկայացնել տեղեկատվություն ֆիզիկական անձ՝ շահառուի մասին, քանզի վերջինս բացակայում է: Մինչդեռ անհասկանալիորեն հենց այս մրցույթի շրջանակներում ՀՀ ոստիկանության կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտմամբ պահանջվել է ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, ինչը Ընկերության մոտ բացակայում է, իսկ նման

տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությանը վերապահված է ներկայացնել միայն գործադիր մարմնի ղեկավարի տվյալները:

Տպավորություն է ստեղծվում, որ ՀՀ ոստիկանությունը նախորոք իմանալով, թե «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն ինչպիսի տեղեկատվություն է ներկայացնում իրական շահառուների մասին, Ընկերության մասնակցությունից և Ընթացակարգի հայտերը բացելուց գրեթե երկու շաբաթ առաջ համապատասխան հարցում կատարելով ՀՀ ՖՆ, արդեն իսկ պատրաստվել է մերժելու «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը՝ մասնակցի իրական շահառուների հիմքով: Սակայն անգամ ՀՀ ֆինանսների նախարարության տրված պարզաբանումից է անհասկանալի, թե ի վերջո, «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն Հավելված 2.1-ով հստակ ինչ տեղեկատվություն պետք է ներկայացներ:

Ընկերությունը հայտնել է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը նման անհիմն մերժման արդյունքում պետությունը ստիպված է լինելու կնքել պայմանագիր հաջորդ մասնակցի՝ «Զնակ Ստանդարտ» ՍՊԸ-ի հետ, ում գնային առաջարկը մոտ 17 մլն ՀՀ դրամով ավելի բարձր է, ինչը հանդիսանում է պետական բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Ընկերությունը գտնում է, որ վերոհիշյալի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 25.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ի լրումն բողոքի՝ ներկայացված գրություններով Ընկերությունը հայտնել է, որ Կարգի 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության կիրառման համար օրենսդիրը սահմանել է երկու իրարից անկախ պայմաններ, որոնք իրարից տարանջատված են «կամ» շաղկապով:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի:

Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

Վերոհիշյալ նորմի բովանդակությունից՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, պարզ է դառնում, որ մասնակիցը կարող է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունից որևիցե մեկը / թվարկված բոլոր պայմանների առկայությունը միաժամանակ պարտադիր չէ/.

1. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը.

2. կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին

3. կամ այն անձի (անձանց) տվյալները, ով ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:

Ընդ որում, հաշվի առնելով, որ թվարկված առաջին պայմանում հստակ հղում է առկա ֆիզիկական անձի վրա, իսկ մյուս երկու պայմաններում նշված է միայն «անձ» եզրույթը, վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ խոսքը գնում է թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձանց մասին:

Տվյալ դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետում «… այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի

կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը … » պայմանը տարանջատված է «…այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին … » պայմանից ինչպես ստորակետով այնպես էլ «Կամ» շաղկապով, այսինքն այս պարագայում գործում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշվածը երկու պայմանների ընտրության հայեցողություն է նախատեսվում, և հետևաբար նշված պայմաններից մեկի կիրառումն էլ բավարար և անհրաժեշտ պայման է հավաստելու, որ պահպանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետով սահմանված պահանջները:

Ընդ որում, տառացի մեկնաբանության դեպքում ունենք հետևյալ պատկերը.

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի մասնակիցները իրավաբանական անձինք են, մասնավորապես,

1. Ատլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ AG ընկերությունը,
2. Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ ՍՊ ընկերությունը:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտում ներկայացված են հիշյալ իրավաբանական անձանց տվյալները, հետևաբար պնդումն առ այն, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի տրամադրած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, այն է՝ բացակայում են իրական շահառուները, անհիմն է:

Ավելին, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի տառացի մեկնաբանության պարագայում ստացվում է հետևյալը, որ

1. «Բիլլ Սթոուն» ՍՊ ընկերությունը չունի ֆիզիկական անձ մասնակից, որը կտիրապետեր «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի բաժնեմասի 10 տոկոսը (թեև հոդվածում խոսքը գնում է բաժնետիրական ընկերությունների մասով), հետևաբար, «Բիլլ Սթոուն» ՍՊ ընկերությունը պարտավոր չէր ներկայացնելու ֆիզիկական անձի որևէ տվյալի որպես

իրական շահառուի, ուստի չպետք է կիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետում նշված 1-ին պայմանը, այն է՝ « … այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը … »

2. «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի անդամներին նշանակելու և ազատելու իրավունք ունեն երկու ընկերություններ՝ Ատլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ AG ընկերությունը և Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ ՍՊ ընկերությունը,

3. Եվ վերջապես, «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի, որպես գնումներին մասնակցող իրավաբանական անձի, վերջինիս կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին ստանալու իրավունքը ևս պատկանում է երկու իրավաբանական, այլ ոչ թե ֆիզիկական, անձանց, այն է՝ Ատլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ AG ընկերությանը և Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ ՍՊ ընկերությանը, ինչն էլ ներկայացվել է գնման հայտով:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն տարիներ ի վեր, այդ թվում նաև 2018-2019թթ., մասնակցել է ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված բազմաթիվ պետական գնման ընթացակարգերի և ներկայացրել իր իրական շահառուների մասին հենց այսպիսի տեղեկություններ, և մինչ օրս Ընկերությունից երբևիցե չի պահանջվել ներկայացնել տեղեկատվություն ֆիզիկական անձ՝ շահառուի մասին, քանզի վերջինս բացակայում է:

Ավելին, օրինակ 2019թ. կայացած թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԳՐԵՆԱԿԱՆ/2019/4 ծածկագրով մրցույթով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է իր իրական շահառուների մասին հենց այսպիսի տեղեկություններ, և Ընկերության հետ կնքվել է պայմանագիր:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից փաստաթղթի Screenshot (հեռախոսի էկրանի հանույթի տարբերակով) տեսքով ներկայացմանը, ապա պետք է նշել, որ օրենքով ներկայացման ձևի հարցում կոնկրետ սահմանում չկա, այլ օրենսդիրը սահմանել է ներկայացնելու պարտականություն, ինչն էլ փաստացի ֆիզիկապես կատարվել է Ընկերության կողմից:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ

անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում, ավելին, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով: Հետևաբար Screenshot տարբերակով փաստաթղթի ներկայացված լինելու հանգամանքն արդեն իսկ վկայում է այն մասին, որ ընկերությունը կատարել է օրենքով իր վրա դրված պահանջը, ընդ որում, screenshot արված տարբերակում ակնհայտ երևում է էլեկտրոնային ստորագրության մակնշումը:

Իսկ եթե վարչական մարմինը կասկածներ ունի ներկայացված փաստաթղթի հավաստիության վերաբերյալ, ապա այս պարագայում օգնության է գալիս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, ըստ որի Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Ոստիկանությունը որպես վարչական մարմնի այս մասով թերևս անգործություն է ցուցաբերել, առավել ևս որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում նրա համար հստակ պարտականություն է սահմանված եղել առ այն, որ եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Վերոգրյալի հիմնավորմամբ, Ընկերությունը գտնում է, որ ինքը թույլ չի տվել Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետով /այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» կետով/ սահմանված պահանջների խախտումներ, իսկ գնահատող հանձնաժողովի օրենքի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի /այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» կետի առկա մեկնաբանությամբ կիրառումը սխալ է, հետևաբար այն ոչ միայն խախտում է դիմողիս իրավունքները, այլ նաև պետության՝ արդյունավետ գնումներ իրականացնելու

իրավունքը, մասնավորապես, նման իրավիճակում ստեղծվում է տպավորություն, որ ՀՀ ոստիկանությունը ամեն գնով փորձում է հովանավորել վերոհիշյալ դաշտում նոր երևան եկած մասնակցին՝ «Զնակ Ստանդարտ» ՍՊԸ-ին: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ նման հովանավորության արդյունքում ապօրինի մերժվում է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը և պետությունը ստիպված կլինի կնքել պայմանագիր «Զնակ Ստանդարտ» ՍՊԸ-ի հետ, ում գնային առաջարկը մոտ 17 մլն. դրամով ավելի թանկ է, քան «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը: Մինչդեռ պետության կայացման համար նման կարևորագույն փուլում, գտնում ենք, անթույլատրելի է ՀՀ պետական բյուջեից մոտ 17 մլն ՀՀ դրամի անհիմն վատնումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա/ կետի անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի, տվյալ դեպքում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի /այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» կետով/ սահմանված պահանջների սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն՝ «հանդիսանալով» ՀՀ-ում որպես պետհամարանիշների միակ մատակարար, ներկայացրել է գնային առաջարկ՝ գնման առարկայի նախահաշվային արժեքի չափով, բացի դա հինգ տարի առաջ նույնիսկ գրեթե կրկնակի թանկացել է, իսկ 2019թ.-ի հունիսին հայտարարված ընթացակարգին «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից, մրցակցության ապահովման շնորհիվ առաջարկվել է 2 անգամ ցածր գնային առաջարկ, ինչը նշանակում է, որ տարիներ շարունակ վերը նշված կազմակերպությունը ապրանքները կարող էր մատակարարել ցածր գնով, ապա հայտնում ենք, որ ՀՀ ԿԱ ոստիկանությունը ակնհայտ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն է ներկայացրել բողոքներ քննող անձին, և ավելին Ընկերությունը հայտնում է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ապրանքի մատակարարումների արժեքը բարձրացել է գրեթե 17 տոկոս /630 ՀՀ դրամ/:

Ընկերությունը պատճառաբանել է, որ 21.06.2019թ. թիվ 2 արձանագրությամբ սահմանված՝ «Բիլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտումը հանձնաժողովի սխալ մեկնաբանության արդյունք է:

Ընդ որում, Ընկերությանը տրամադրելով մեկ աշխատանքային օր ենթադրյալ առերևույթ խախտումը վերացնելու համար՝ գնահատող հանձնաժողովը առավել քան, հստակորեն չի կոնկրետացնում, թե «Բիլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից կոնկրետ ինչպիսի խախտում է թույլ տրված: Հանձնաժողովն ընդամենը հղում է կատարում հեռախոսային խոսակցությամբ տրված պարզաբանմանը, և այն հանգամանքը, որ առկա է ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի՝ ի պատասխան 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրության տրված պարզաբանումը, որտեղ ընդամենը ամբողջությամբ հղում է արված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ/ ենթակետին, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի պարբերությանը:

Այսինքն, թե կոնկրետ խախտումն ինչպիսի բնույթ է կրում, կամ որտեղ է ընկերության կողմից թույլ տրված բացթողումը, անորոշ է եղել:

Նման պայմաններում, տպավորություն է ստեղծվում, թե Ընկերությունը պարտավոր է զբաղվել գուշակություններով, քանի որ գնահատման մարմինը, չղեկավարվելով օրենքի տառի դրույթներով, ծանրաբեռնել է «Բիլ Սթոուն» ՍՊ ընկերությանը ներկայացնելու այնպիսի փաստաթղթեր, տեղեկատվություն, կամ կատարելու այնպիսի պարտականություն, որը օրենքով պարտադրված չէ ընկերությանը: Գնահատման հանձնաժողովի պահանջը չի բխել գնումների մասին օրենսդրության պահանջներից և թույլ է տվել գնումների գործընթացում կամայականության արգելքի սկզբունքի կոպիտ խախտում, որն էլ հանգեցրել է գնման պրոցեսում ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց հարաբերություններիում մրցակցության ուղղակի կամ անուղղակի խտրականության:

Իր հերթին Ընկերությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև 41-րդ հոդվածի 1-ին մասի, գտել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ/ ենթակետի դրույթներով, թվարկված բոլոր պայմաններից բավարար է համարել միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը և հանձնաժողովին է ներկայացրել ընկերության հիմնադիր-մասնակից հանդիսացող երկու իրավաբանական անձանց տվյալները, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի ղեկավարի տվյալները:

Ավելին, վարույթի ընթացքում հնչեցվել է, որ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում պետական գրանցման պահին Ընկերության

ներկայացուցիչը լրացնում է թերթիկ՝ ընկերության իրական շահառուների մասին, մինչ դեռ, ընկերությունը հիմնադրելիս իրական շահառուների ցանկը նշելիս, իրավաբանական անձ հիմնադիր լինելու դեպքում նշվում է ընդամենը ընկերության գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, որպես ընկերության շահառուի: Սա ևս փաստարկ է այն մասին, որ ընկերությունը թույլ չի տվել իրավական և ոչ մի նորմի խախտում և իր վարքագիծը տեղավորել է Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ/ ենթակետի դրույթներով սահմանված դիսպոզիցիայի ներքո:

Գնահատման հանձնաժողովի ներկայացուցիչն անընդհատ պնդում և հղում է կատարում այն փաստին, թե Ընկերությունը պարտավոր էր ներկայացնելու միմիայն ֆիզիկական անձ շահառուի տվյալներ, սակայն որպես իր այդպիսի պնդման հիմք՝ չբերեց հիմնավոր իրավական որևէ հիմնավորում, միայն միամտորեն և վարչական մարմնին ոչ հարիր գործելաոճով հայտարարություն արեց, թե <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ/ ենթակետի դրույթների մեկնաբանման և իրավակիրառության ուղղությամբ հարցումներ և խորհրդակցություններ են անցկացրել փաստաբանների ու լեզվաբանների հետ:

Մինչ դեռ ընկերությունը առավել, քան հստակորեն մեկնաբանել և հիմնավորել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ/ ենթակետի կիրառման հնարավոր մեխանիզմն, առ այն, որ Օենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետում նշված

«… այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը …» պայմանը տարանջատված է « …այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին …» պայմանից ինչպես ստորակետով այնպես էլ «Կամ» շաղկապով, ինչն էլ նշանակում է, որ Ընկերությունը կարող է ղեկավարվել վերը նշված երկու պայմաններից մեկով:

Ընկերությունը կրկին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը և խնդրել մերժել գնահատման հանձնաժողովի առարկությունները, իսկ «Բիլ Սթոուն» ՍՊ ընկերության ներկայացրած բողոքը բավարարել:

«Բիլ Սթոուն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2019թ. ժամը 11:15-ին և 17.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ դիրքորոշումը:

2. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ոստիկանությունը 08.07.2019թ. թիվ 01.3/16501-19 գրությամբ, ինչպես նաև ի լրումն գրության ներկայացված գրություններով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 21.06.2019թ. տեղի ունեցած նիստում «Բիլ Սթոուն» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր հավելված 2.1-ում տեղ գտած անհամապասխանությունը շտկելու համար: Արձանագրության, ինչպես նաև Ընկերությանն ուղարկված ծանուցման մեջ հստակ նշվել է, թե ինչի հետ է կապված անհամապատասխանությունը, գնումների մասին ՀՀ օրենսդրության որ կետերին պետք է ուշադրություն դարձնել: Բացի այդ, պատվիրատուները պարտավոր չեն մասնակիցների համար հստակեցնել և պարզաբանել, թե ինչպես պետք է լրացվեն հրավերով պահանջվող հավելվածները, հատկապես այն պարագայում, երբ հավելված 2.1-ի լրացվող դաշտերում հստակ նշված է, որ ներկայացվում են ֆիզիկական անձանց տվյալներ, ընդ որում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց տվյալները: Հայտի մաս կազմող հավելված 2.1-ում Ընկերության կողմից նշվել են ոչ ճիշտ տեղեկություններ: Ընկերությանը տրվել է շտկման հնարավորություն, սակայն տվյալներն անորոշ պատճառով չեն շտկվել: Մասնավորապես՝ Կարգի 32-րդ կետի «թ» ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է նշել բոլոր իրական շահառուներին /ֆիզիկական անձանց/, իսկ գործադիր մարմնի ղեկավարի տվյալները նշվում են միայն այն դեպքում, եթե 10 տոկոսից ավել բաժնեմաս ունեցողներ չկան: Տվյալ հարցի շուրջ պարզաբանման համար Պատվիրատուն դիմել է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և ստացել պատասխան: Բացի այդ, նշված խնդրի պարզաբանման համար կազմակերպվել է նաև հանդիպում ՀՀ ֆինանսների նախարարությունում մեթոդաբանության վարչության ղեկավարի մոտ, որտեղ կրկին պարզաբանվել է, որ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով և Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ և «Փողերի լվացման և ահաբեկչության

ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը՝ որպես իրական շահառու պետք է ներկայացնել միայն ֆիզիկական անձանց, իրավաբանական անձի տվյալներ չեն կարող ներկայացվել, իսկ գործադիր մարմնի ղեկավարի տվյալները ներկայացվում են միայն այն դեպքում, երբ բոլոր բաժնետերերի բաժնեմասերը 10 տոկոսից պակաս են:

24.06.2019թ. Ընկերության կողմից 2 անգամ հեռախոսի էկրանի հանույթի միջոցով ուղարկվել է հավելված 2.1-ի շտկում, որը չի կարող համարվել օրինական, քանի որ հնարավոր չէ ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, ինչը հակասում է Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներին: Բացի դա ուղարկվել է երկու տարբերակ, ինչը կրկին անհասկանալի է և որի մասին նշվել է 25.06.2019թ. արձանագրության մեջ: Ի դեպ Ընկերության կողմից էլեկտրոնային ստորագրված PDF փաստաթղերն ուղարկվել են մերժման արձանագրության հրապարակումից հետո՝ 25.06.2019թ. ժամը 20:20-ին:

«Բիլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքում անդադար նշվում է, որ հավելված 2.1-ում նշվել է իրական շահառու հանդիսացող իրավաբանական անձանց տվյալները, որոնք իրավունք ունեն նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում են մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Բայց արդյոք իրավաբանական անձը կարող է կայացնել որոշումներ կամ շահույթ ստանալ: Բողոքում մի քանի անգամ շարադրվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունը, սակայն Ընկերությունն այդպես էլ չի կատարել շտկում այդ կետի պահանջներին համաձայն:

Տվյալ դեպքում Ընկերության (պետական ռեգիստրի վկայականի քաղվածք առ 04.07.2019թ.) բաժնետեր հանդիսանում են

70 տոկոս- «Ատլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ ԱԳ» ընկերությունը, ոչ ռեզիդենտ, գրանցված Շվեցարիայում, որի իրական շահառուներին՝ ֆիզիկական անձանց, պետք է պարտադիր ներկայացնել.

30 տոկոս- «Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ» ՍՊԸ-ն, ՀՀ ռեզիդենտ, որի իրական շահառուները ևս չեն ներկայացվել:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչ այս ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված ոչ մի ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ոչ մի անգամ որպես իրական շահառու չեն ներկայացվել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ ոստիկանությունը գտնում է, որ Ընկերության կողմից միտումնավոր թաքցվել են հիմնադիր իրավաբանական անձանց իրական շահառուները, քանի որ հիմնադիրները փոխկապակցված են, ինչի հետևանքով Ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես հավելված 2.1-ում ներկայացվել են ոչ ճիշտ տեղեկություններ:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի շրջանակներում Ընկերության և «Զնակ Ստանդարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներում 17 000 000 ՀՀ դրամ տարբերությանը, ապա տարբերությունը կազմել է 13 650 000 ՀՀ դրամ, քանի որ մասնակիցների գնային առաջարկները համեմատվում են առանց ԱԱՀ-ի: 26.12.2018թ. հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է 87 654 750 ՀՀ դրամ, իսկ «ՏԻՊՈԳՐԱՖԻԱ N 2» կազմակերպությունը՝ 66 854 878.2 ՀՀ դրամ գնային առաջարկ՝ առանց ԱԱՀ: «ՏԻՊՈԳՐԱՖԻԱ N 2» կազմակերպությունը ԱԱՀ վճարող չէ: Նշված մրցույթի շրջանակներում Պատվիրատուն խնայել է 20 799 872 ՀՀ դրամ: Հատկանշական է այն հանգամանքը, որ նշված մրցույթը հայտարարվել է էլեկտրոնային աճուրդի միջոցով, իսկ Ընկերությունը հնարավորություն ուներ նվազեցնելու գնային առաջարկը, որը սակայն չի կատարել: 15.03.2019թ. հայտարարված ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-27 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է 130 111 025 ՀՀ դրամ, իսկ «Զնակ Ստանդարտ» ՍՊԸ-ն՝ 112 293 750 ՀՀ դրամ գնային առաջարկ: Սույն մրցույթի շրջանակներում Պատվիրատուն խնայել է 17 817 275 ՀՀ դրամ: 2019թ.-ին մրցակցության ապահովման շնորհիվ պետական բյուջեն տնտեսել է մոտ 250մլն ՀՀ դրամ: Պատվիրատուն հայտնել է, որ 2008 թվականից ի վեր ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված պետհամարանիշների ձեռքբերման ընթացակարգերին Ընկերությունը ներկայացրել է գնային առաջակ՝ գնման առարկայի նախահաշվային արժեքի չափով, իսկ 2019թ. հունիսին հայտարարված ընթացակարգին Ընկերության կողմից, մրցակցության ապահովման շնորհիվ առաջարկվել է 2 անգամ ցածր գնային առաջարկ, ինչը նշանակում է, որ տարիներ շարունակ վերը նշված կազմակերպությունն ապրանքները կարող էր մատակարարել ցածր գնով:

2019թ. կարիքների համար ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների պատրաստման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգերում պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ

Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները՝ ընթացակարգերի շրջանակներում բացառվել է մրցակիցների շրջանակի սահմանափակումը, ապահովվել է արդար մրցակցություն և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ բողոքում նշված ՍՑ-ԱՄ-2017/74 որոշմամբ քննարկված դեպքն առհասարակ կապ չունի Ընթացակարգի դեպքի հետ, ընդ որում Ընկերությունը որոշման բովանդակությունը կրճատել, հարմարեցրել և ներկայացրել է լրիվ այլ՝ իրեն ձեռնտու բովանդակությամբ:

ՀՀ ոստիկանությունում սույն հարցի շուրջ քննարկումներ են իրականացվել նաև տվյալ պահին ՀՀ ոստիկանությունում ուսումնասիրություններ իրականացնող ՊՎԾ աշխատակիցների հետ, որոնք համակարծիք են ՀՀ ոստիկանության դիրքորոշման հետ: Միևնույն ժամանակ ուսումնասիրվում է նաև «Բիլ Սթոուն» ՍՊԸ-ի գործունեությունը 2008 թվականից մինչև 2019թ.: Ուսումնասիրության ընթացքում նյութերն ուղարկվել են ՀՔԾ, որտեղ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 310-րդ հոդվածներով հարուցված է քրեական գործ: Տվյալ դեպքում ՀՀ ոստիկանությունը գործել է և գործում է միայն օրենսդրության պահանջներին համապատասխան:

Պատվիրատուն գտնում է, որ բողոքն անհիմն է, քանի որ Ընկերության իրավունքները չեն խախտվել:

Պատվիրատուն խնդրել է մերժել Ընկերության կողմից ներկայացված բողոքը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2019թ. ժամը 11:15-ին և 17.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտում առկա է անհամապատասխանություն, այն է՝ Ընկերության կողմից ներկայացված Հավելված թիվ 2.1-ում (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ), ներկայացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով չի շտկվել հայտի թիվ 2.1 Հավելվածում արձանագրված անհամապատասխանությունը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից 02.07.2019թ. ներկայացված բողոքը՝ կից գրություններով, ՀՀ ոստիկանության 08.07.2019թ. թիվ 01.3/16501-19 գրությունը՝ կից գրություններով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող

ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 2.1 հավելվածով նախատեսվել է մասնակցի շահառուների մասին տվյալներ ներկայացնելու պահանջը, հետևյալ ձևով՝

հ/հ	Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

_____ -ն հավաստում է, որ իրական շահառուների մասին

մասնակցի անվանումը

ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտում առկա է անհամապատասխանություն, այն է՝ Ընկերության կողմից ներկայացված Հավելված թիվ

2.1-ում (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ), ներկայացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն 21.06.2019թ. «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով ընթացակարգի նիստում «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին տրվել էր մեկ աշխատանքային օր իր կողմից ներկայացված Հավելված թիվ 2.1-ի (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ) շտկման համար, որը ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

24.06.2019թ. Ընկերության կողմից «policetv.gnumner@mail.ru» էլեկտրոնային փոստին ուղարկվել է հավելված 2.1-ի շտկման 1-ին և 2-րդ տարբերակը հեռախոսի էկրանի հանույթի տարբերակով, որը չի կարող համարվել օրինական, քանի որ ուղարկված նկարի միջոցով հնարավոր չէ պարզել էլեկտրոնային ստորագրության իսկությունը: Բացի այդ Ընկերության տրամադրած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը (բացակայում են իրական շահառուները), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընունելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունը և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2019թ. ստացված թիվ ՖՆ/59497-19 գրությունը, որոշել է մերժել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը:

Այսպես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունը սահմանում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը **<u>կամ այն անձի (անձանց) տվյալները</u>, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:** Սույն պարբերության

մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն ի սկզբանե հայտով ներկայացված թիվ 2.1 Հավելվածում՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալներում որպես շահառու նշել է «Ատլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ ԱԳ» կազմակերպությանը և «Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ» ՍՊԸ-ին:

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցված (գրանցման համար՝ 269.110.03092) «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կանոնադրության համաձայն՝ Ընկերության մասնակիցները հանդիսանում են՝

Մասնակցի անուն, ազգանուն, անձնագրային տվյալները, հաշվառման հասցեն	Բաժնեմասերը Քանակը (ՀՀ դրամ) (հատ)	Բաժնեմասի չափը (տոկոս)
«Ատլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ ԱԳ» բաժնետիրական ընկերությունը (ֆիրմային համար՝ CH-020.3.039.005-7, գրանցված՝ 27.03.2013թ., գտնվելու վայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ցյուրիխշտրասսե 102, 8134 Աուդսվիլ)	35 000 (70 հատ)	70
«Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ» ՍՊԸ (գրանցման համար՝ 273.110.04283, գրանցված՝ 31.05.2006թ., իրավաբ. Հասցե՝ ք. Երևան, Խորենացու 35)	15 000 (30 հատ)	30

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետում և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունում նշվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է **ֆիզիկական անձի (անձանց) տվյալները <u>կամ անձի (անձանց) տվյալները</u>,** որի տակ հասկացվում է թե իրավաբանական և թե ֆիզիկական անձը: Այսինքն՝ նշված պայմանները բաժանված են

«կամ» շաղկապով, հետևաբար նորմի բովանդակությունից բխում է այն, որ մասնակցի կողմից կարող են ներկայացվել նաև ֆիզիկական անձ չհանդիսացող իրական շահառուի տվյալները, ինչը և իրականացվել է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից: Ընդ որում՝ ինչպես արդեն վերոնշվել է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրական շահառուները հանդիսանում են իրավաբանական անձինք՝ «Ատլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ ԱԳ» կազմակերպությունը և «Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված թիվ 2.1 Հավելվածն ի սկզբանե համապատասխանել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության, հետևաբար և Ընթացակարգի հրավերի պահանջներին, ուստիև գտնում եմ, որ մերժելով Ընկերության կողմից ներկայացված հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից վկայակոչված այն փաստերին, որ Ընկերության կողմից միտումնավոր թաքցվել են հիմնադիր իրավաբանական անձանց իրական շահառուները, քանի որ հիմնադիրները փոխկապակցված են և այլն, ապա այս տեսանկյունից Կարգի 67-րդ կետը նախատեսում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից 02.07.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**